



ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ  
(Մաղկարաց)

ԲԱԶՄԱՎԵՊ\*

(Հնդհատված ձեռագիրը ապա շարունակվում է).

17ա

|| 1833 թուական

Աներկրմա գոլով, թէ՝ նորին Վեհափառ Օժութիւնն ըստ խնդրոյ իմոյ արձակեսցէ զմեզ, ևս հայցեմ ի ձէնջ յստահան ձեր զհրաման ի կաթողիկոսէն գալ ի Քանաքեռ, ուր զնամ ես այսօր, իսկապէս հաւատարիմս առնեմ զձեր հայրութեան անսուս բանի կուսակալի, թէ աշխատութեամբ ձեր, զոր ցուցանէք վասն որդանն կարմրոյ, պակեսցի: Արժանապէս կատարեալ վերապատութեամբ մնամ Ձեր Սրբազնութեան, ողորմած Տէր, խոնարհ ծառա, կենապ Վասիլի Բեհրուդով, ի 14 յունիսի, 1833, Երևան:

Բաս այս զրոյ առաքեաց զիս նորին Սրբազն Օժութիւնն առ նորին պայծառափայլութիւնն ի Քանաքեռ, որ մինչ ներկայացայ, ասաց՝ Հրաման է նորին բարձր գերազանցութեան ըստ ժամանակին գնաս գտեղի որդանցն յազգաս ժողովելոյ և ես զրոմ, ասաց, մօվորվներին Հրաման, որքան մարդ որ հարկաւոր է վասն ժողովելոյ որդան կարմրոյ, տան քեզ օգնութիւն և ինչ ինչ խարճ որ լինի, մօվորվն հնդասցէ: յանձնառու եղէ կատարել զհրամանն նորին և մինչ արձակեաց զիս գել յԱթոռու, ասաց՝ Յ փութ որդի կամիմ տաս, ևս համեստութեամբ ասացի՛ տաւողն Աստուած է: և մինչ պայմանեալ ժամանակն ենաս մեզ առ ի զնալ անզր, ինդրեցի որ զնամ ի նոր Վիրապ նստեմ և ոչ մնամ ի մէջ թուրքաբնակ գեղջն: կամեցաւ լինիլ այնպէս, որ և զնացի ըստ ժամանակին:

Օգոստոսի 20-ին զնացի Երևան, ներկայացայ նորին պայծառափայլութեանն, կրկին յիշեցի վասն Յ փութ

\* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1963 թվականի Խ մ-ից և 1964 թվականի Խ Ա-ից:

որդն խնդրելոյ թէ՝ շո՞րն կամիս Յ փութ լինել, թէ՝ կենդանին. յերբ շորացեալն ասաց, մնացի տարակոյս, ըստ որում այնքան և նորա կիսոյ շափ լիի ևս ժողովեալ, ինչ և իցէ՝ յահճն առի զաշխատութիւնն յուսալով Աստուած, զնացի, որ և յաջողեցաւ մեզ զայն գործն. ընդ յաջողելոյն Աստուածոյ գտի Յ փութ շորացուցեալ. ըստ եղանակի գրութեան նոցին, մեռուցի զկինդանի որդն անուշանամ ըմպելի եռացեալ ջրով և ապա սփռեալ յարեւու ի վերաբ կտաւոց շորացան թէպէտ, բայց իւզն նոցա արտաք թորեր, ուր զնեաք տօպրակով, իբր չուր թրչին զտեղն, և այն:

Ի զնալս և ի վերապառնախ անդրէն, զինչ ծախս որ արարեալ էի, ոչ ասի պրավօն<sup>51</sup>, այլ միային ծառային իմոյ վարձն տուաւ 2 թուման Յ ու. և մինչ վերապարձայ բերեալ Երևան յանձնեցի Յ փութ շորացեալ որդն նորին պայծառափայլութեանն, ընկալաւ ուրախութեամբ շնորհակալ լինելով, վասն որոյ խնդրեցի ամեստատ<sup>52</sup> վասն ծառայութեան, տուաւ յօձարութեամբ, թարգմանութեամբ հանդերձ, համար 3380:

Նախ քան պայմանեալ ժամանակն և գրեաց մեզ այն թուոչ զնալ առ պարօն Ֆօն Բէնտէլն խնդրեց առ մեզ ըստ Հրամանի նորին բարձր գերազանցութեանն և Հրամանի առ նոյն պարօն Ֆօն Բէնտէլն, Համար 1941, 19 հունիսի 1833, Դարաշիլակու:

|| 1834

Մինչ նորին պայծառափայլութիւնն գնաց ի Տփիսի քաղաքն և մատուցեալ էր Յ փութ որդն շորացեալ, նա ինքն ընկալեալ էր շատ գոհունակութեամբ, կուսակալն կովկասեան գնտի, վասն որոյ ձեռամբ նորին պայծառափայլութեանն յղեալ էր մեզ 1834 ամի. մարտ 28.

<sup>51</sup> Իրավունք, հասանելիք: — <sup>52</sup> Վկայական:



կամեցայ օգուտ տէրութեանն ժանուցանել նորին բարձր գերազանցութեանն:

Համարեցէք ինձ ևս նման պարու ծովսէփ Տուշալովին, որպէս նա տայ ժանօթութիւն ըստ մտաց իւրոց օգուտ տէրութեանն, նոյնպէս և ես կամեցայ տալ օգուտ որպէս գրեալ եմ. եթէ տեղիք տային այսմ բանիցո, առաւել ևս ժագումն լինէր մտաց այսպիսի օգուտ բանք, որ յայտնի են բազմց սրբազնագումից և վեճագումից ծառայութիւններ զանազան:

Խոսումնմբ զամ նոր ի նորոյ յառաջ ածել և ի լոյս ընծայել զանազան բանք, որ ոչինչ համարեն այսպիսի ծառայութիւններ:

Ասացէք ինձ, թէ ամէն նորոպա և հօր տէրութիւնք որ պայծառ անոն ունեն, ուստի՝ է պայծառութիւնք նոցա, ոչ ապաքէն արհեստատրք են, որ զանազան հնարու գործ ածեն, իւրաքանչիւր բաղադրի գործարքն, իւրաքանչիւր աշխանց. ես ըստ իմ տկար կարեաց ոչ խնայիցի աղքատ քանկին իմոյ և ոչ խնայեմ բնաւ յաջազ զանազան բանիցն ծախուց փորձելոյ և զննարն գտանելոյ, որ Սրբոյն Աթոռոյու և գահակալի սորին և սրբազն սինօթի անոնն, եղջիւրն բարձր առնեմ. թէ ինձ ոչ լինեն կամակից և օգնական, ո՞չ է այն, որ զուր տեղն ախմախանալ՝ իւր քանկին վնաս տայ, եթէ մինչ ոչ կորուսանեմք, տասն ուստի՝ գտանեմք:

|| Այս, կորուսանել հարկաւոր է մինչ վասն տասին, որ մինչ որոնես միոյն, գտանես տասն ի միասին:

Այն ժամանակին, որ նոր էի ուսեալ բաղաշիխ լաշխարդն, երկանու պղնձահանքի վերակացու Ղազար ուն օրհնեալ, որոյ հոգին Տէրն լուսաւորեսցէ, ետու նմա նշան լաշխարդի բար փոքր. նրա նմանութեամբ թէպէտ եղիտ, ոչ էր այնքան ազնին, բայց փորձ նորա բազում անգամ զանազան կերպի առի և տեսի մի և նոյն բանն առնէր ի գործ արկաններ, վասն այն ետու նմա մին թուման, մին շախու և մին մահամայ ժաղկալ, ողորմութեամբն Աստուծոյ, որբան մինչկ ցգնալն մեր ի Հաղպատ ունէի ի նմանէ և անդ ևս որոնեցի և գործ դրամով իմոյ և այն, որոյ պակասութիւնն ոչ կրցի:

1818 ամին Առաքել եպիսկոպոս ուն ի Թէքիւտաղու, եկն աստ վասն եպիսկոպոսութեան, նա խնդրեաց յինեն 100 դրամ լաշխարդ, որ թէ կամենայի կարօղ էի տալ կէսն, բայց ոչ ետու այնքան, կարծելով, թէ վասն թանգարին լինելոյն ոչ առնէ. խոստացայ տալ 10 դրամ, որ ետու նմա, դրամն 5 ռեալի. տես դու աստ, եթէ մինչ ոչ կորուսան դի կարէի գտանել այնքան ռեալն, որ շատ փշշման եղի նրա ուզածն չի տուի և մինչ տարեալ մատուցի նմա, մին թիսայ զանելիրու ուրիշայք թափեաց առաջին, աշքերս բաց մենաց, որ չէի տեսեալ և շատ փշշման եմ մինչկ ցայժմ. այս բանս վասն միոյ կորուսանելոյն և բազումն գտանելոյ գրեցի օգտաէր և շահաւէր ընթերցողացդ, ի ծանօթութիւն և ի միամտութիւն և այլն:

Նոյն ժատանի բարանց միշին գոր առաւել հազուագիւտ և թանկագին քար մի, որում դահնա ֆրանկի ասեն, գիրք մի ևս գոր, որու գրեալ էր արարողութիւնն ու փորձառութիւնն զահնալին, յորմէ օգուտ ևս զար անգամ, կարօտելոցն առանց իւնայելու ետու ի փառ Աստուծոյ, որ այժմ լուսին բնակին:

1822 ամին ընդ լուսահողի սրբազն Տեառն մերոյ Եփեմայ օծելոյն Աստուծոյ և հոգեոր ծնողին իմոյ մտար ի Ցեղասպատուպօլ քաղաքն. գտի անդ ևս քար մի, որոյ անունն ըստ պատութեան Առաքել պատմագրին, է բամահի և ըստ աշխարհի լեզուաւ, լեզուար ասեն և նոյն բարին հետ սեպային քար մի ևս ելանէ, նոյն բնութեամբ որոյ անունն եղի Հանքային մերան, որ լաւ գոր գրէ իրոք թանաք, մինչ ցըու լոսես ի վերայ կարծր վիմի, որոյ փորձն առեալ ևմ և նովաւ գրեալ եմ խնդիր առ հոգեոր ծնողն իմ օծելոյն Աստուծոյ Տեառն Յովհաննու սրբազնագյու Հայրապետին մերոյ, որոյ Տէր տացէ կեանս խաղաղականս. այս բանիս վկայ է աւագ լուսարար գերապատի և աստուծափառ բարձր սրբազնութիւնն Բարսեղ Արհին, որում ընծայեալ եմ 2 տեսակն ևս 1835 ի գնալն իւր ընդ օծելոյն Աստուծոյ ի Տփիսիս:

Այսմ ամի 1834 յայիսի 21-ին Տփիսիս նորոպ գէտն աստուծափառ բարձր սրբազնութիւնն Կարապետ արհին եկն ի սենեակն մեր, Բարսեղ արհի աւագ եղայրն մեր, ասաց ինչ ինչ որ ունես բեր տեսնի. ղրմզն ու ձու նորին, լաշխարդն և քարն նորա, պատաշն վասն տպարանի գրեանց լուանալոյ, նշշայան, սոսինձն վասն կցանի և զալամի ժանկեառն, նաև նոյն քարինքն խամահէ, || որոյ արարողութիւնն թէ յինչ պէտս ունի բարն այն, գրով մատուցի նորին բարձր սրբազնութեան, բայց նա ոչ գտաւ առ իս բարերար, միարանութեանն դրամ բաժանեաց, ինձ ոչ տուաւ, որ չէր վայել իւր աշխարդեանն. քարի բնութիւնն է այս, ըստ պատմութեան Առաքել պատմագրին թէ՝ ամէն ցեղ ուսուցի ղեղ է, մինչ վարդերով լիսուն ի վերայ եսան քարին և բանն, ուռուցին ցրուէ և թշկէ, որոյ փորձն ևս առի ի Հաղպատ 1822 թուին. թէ շրով միայն լոսեն ի վերայ լաշխամխաբարին որ շուրու կարմրի մին գինույ թասով լափ տան այնմ, որ պատահի երկիւլ, ըմպէլ բանին, տանի երկիւլ 2 և 3 անկամ ըմպէլն առաւել օգնէ. ղեղութիւնն սիսիսայ թէ ունենայ որ, սոյնպէս ըմպէլ տան բանիցս, թշկէ Աստուծով. օճաշարին և կարճահարին շուտով հարեն թէպէտ կարծր բարի վերայ և քանի, առ ժամայն տանի ցամ և թշկութիւնն տանին Աստուծով. փանզահարիցն առաւել է սա գիտողի մօտն, բայց զի՞ն օգուտ գտանին այսպիսի բանքս, որոյ վասն արժանի է ասել՝ հաստ ու բարակն այ մէկ գին, վայ վայ բարակ մանողին. թէ սուտ է բանս այս, ոյ, այլ է ստորյու:

1. 1836 մինչ լուսահողի Յովհաննէս կաթողիկոս հոգեոր ծնողն իմ, էր ի Տփիսիս քաղաքն, որ ի ժամանակ պարապ մնալոյ, վասն որոյ եղեալ ունէի յառաջագոյն մտաց վասն ծաղկելոյ զթաշկինակս, իր պան զտեղի սիզարեր որդանցն կարմրոյ, ըստ Մովսէսի եռենացոյն, որ ասէ՝ դոյ երեան որդն սիզարեր և այլն:

Ես ամենախոնարհ ծառայս նոցին վեհապետիցն և օծելոյն Աստուծոյ հայրապետիցն Տեառն Տեառն Եղիշեալ առաջոյ հոգեոր ծնողն իմոյ և երկրորդին՝ Յովհաննու 8-րդ Կարբեցոյ հոգեոր ծնողն իմոյ, հարազատ որդի գոլով նոցին, որ յաւուրս Դաւիթ լուսահողի կաթողիկոսին ասացի աշակերտան եմ ծաղկարար և այլ կարարարութեան արհեստին, ծառայելով ոսկերին, ծաղ-

կանկար և գրագիր Տէր Յովհան սրբակոն քահանալին և յաւուրսն Դանիէլ սրբազն կաթողիկոսին յառաջին Հոգիոր ծնօվնս սկսեալ մինչ յարդ՝ ծաղկեալ եմ զկոնդակն, զօրշնութեան թուղթն, էկաւ հասաւինն, և քաշուածքն, հանդերձ ճաճանճն և իր գրով նոցաւ

Ասացի և ասեմ քեզ, ով ընթերցողդ յայսմ տետրակիս, լուր և ի միտ առ զամենայն բանսն հանգամանօք:

Ի 1836 ամին, ի մեծի պահոց աւուրսն, ի լոյս ընծայեցի զարդումնին թաշկինակն զարմանալի միկնոյն դրութեամբ, որում նկարեալ էի զտեղի սիզարեր որդանցն կարմրայ, իրու զպան, էր ընդ եղեր նոցածաղկաւս հաշիբայ, և ի մէշն էր Մասիս լեառն դաշտունի իրով, որում զլափն ձինապատ, նաևն նոյեան տապանի, ծիածանն աղեղնաձև, զսուրր ազրիւրն բժշկարար, զսուրոս նորա մեծ գետն երասխ, այսկոյսն երասիայ Խոր Վիրապն, հանդերձ իր լեառնաման բրոֆն և շրջապատ նորա յայսկոյս և յայնկոյսն ևս է Սեաւ ջուրն, Շօրլու զիւղի հանդն, որ կից է Սարուան-լուր տաճկարնակ զիւղին, սկսեալ աստէն զնա' հասիր Խվայի, Դարդալու, Խոր Վիրապ, Ղաջորլու, Նեղու, Շարրու զահնայիցն սկսեալ մինչև ցՂարապալայ լի է յեզր Երասիայ յայսկոյս և յայնկոյսն. ևս է ի Բայրամալու, ի Բաշքենանդ և այն, ուր որ աչք մարդոյ բանէ, բնդ ամէն տեղիս լի է, մարդ պէտք է որ կորուանէ մինն և գտանէ տասն, որպէսն ես կորուայ յառաջադոյն մինն և զտի Աստուծով իմով զվերշին աւուրսն իմ տասն:

|| 1836 ամի Տեառն և ի միշի սորա թիւն 1837:

1. 1836 մարտի 18. նուիրեցի, ընծայեցի, յղեցի նորին Վեհափառ Սրբազն Օծութեանն որ էր ի Թիֆլիզ, շատ գոհունակութեամբ ընկալեալ էր և դիեալ շնորհակալութիւն և ընդ օրհութեան գրոյն շուխայ մի ևս էր նուիրեալ մեզ, որ այժմ ունի առ իր, Գէորգ Եպիսկոպոս հոգեբորդի նորին Վեհափառութեանն:

2. Մինն ի սոցանէ մի և նոյն պլանն որդան կարմրոյ, նուիրեցի նորին Բարձր Սրբազնութեան Տեառն Ներսէսի բարերարին իմոյ ի 1834 ամին, ի մարտի 8, ի ձեռն Բժշկեան, բարձր արժանապատութեան խաչափառ Յովհակի վարդապետ եղորն իմոյ որ նորին Վեհափառութեանն ի 1842 ամն Տեառն օգոստոսի 6-ին դրեալն շնորհակալութիւնն յաղագս թաշկինակին, ստացայ ի սեպտեմբերի 9:

3. Մին հատն ևս նուիրեցի Հնդկաց ծայրագոյն նուիրակ բարձր սրբազնութիւն Պօղոս արքեպիսկոպոս հոգմար եղորն մերոյ, յաղագս սիրոյ և վասն զանազան կերպ նկար ի վերայ կտաւոյ և զիկին դեղօրէից նորա խընդրեցի որ բերցէ վասն իմ և օ մսխալ իւղալի դրմզ հտու նորին սուրբ եղայրութեանն, թէ հարիցէ գտանել անը իւղանան վարպետ զրմզի, արարողութիւն նորին դրեալ բերցէ վասն մեր. ի վերապանալն իւր ի Սուրբ Աթոռս 1843 ամին պատմեաց նա վասն թաշկինակին մերոյ որ ընծայեալ էի նորին հարազատ եղայրութեանն և ասաց՝ ի ժամանելն իմ ի Կալկաթայ, ընծայեցի բարեպաշա պարոն Յովհաննէս Մելքոն Մանուկին, որ շատ հարգանոք ընկալաւ ասէ և շարշիայով և շուշարանով զարդարեալ եղ ի ասն իւրում և ասաց, համարեցի ալնպէս թէ Սուրբ Աթոռն և Երևան քաղաքն ինձ բաշխեցիր:

Ի սոցանէ մին հատն ևս միկնոյն ձեռվն որպէս պատմեցի թէ ըզտեղի սիզարեր որդանցն կարմրոյ, իրեն պլան արարեալ նկարեցի, ընծայեցի յատուկ բարերարին իմոյ նորին պայծառափալութեանն տեառն Վասիլի կենեազ զեներալ մայիսոր Յովհակիլ Բնշրուգովին, որ նա ևս մեծ գոհունակութեամբ ընկալաւ և նոյն բանն ասաց թէ՝ այնպէս համարեցի, որ Երևան և Սուրբ Աթոռն ինձ բաշխեցիր. վասն այն ասեմ սմա բարերար իմ, որ ինքն ընկալաւ զինդիրս վասն մատուցանելոյն իմոյ զպարազայն զրմզի արարողութեան և դրմզն հանգերձ սիզարեր որդովն, և զծու նորին, առանձինն և այն, որ մատուցյա առաջինն նորին բարձր գերազանցութեան բարօն Բօղէն կուսակալին կովկասեան զնդին. 1830 և ևս ի ձեռն այսր երկուց զիմաւորացն մատուցի նորին կայսերական բարձրութեան 1834 ամի (հոկտեմբերի 5-ն էր նորին կայսեր մեծութեան զալն) կենարարին մերոյ զրօնոցով ի ձեռն ծառային ձերոյ և մերս հարազատ աշակերտ Գէորգ Աղազատովին և ի միշի նոյն բօթնոցին ունէի պատրաստի ապակեայ տոսի մի խնկաի. այս է կենարանի որդն կարմրոյ մաղեալն առանձին և զսիզան ընդ հողով առանձին, նոյն տփովն որ 2 աշկանի էի շինել տուեալ և զծու նորին առանձին. և մինչ նորին Վեհափառ Սուրբ Օծութիւնն հրամայեաց տանիլ ի սրբազն սինօթարանի զուռն, մինչ ել անգին կայսրն ամենաողորմածարար կանքնեաց անդասոր, էր ընդ նորին կայսերական մեծութեան մերձ կանքնեալ պարօն Բօղէն կուսակալն, կաթողիկոսն, սրբազն սինճողոսքն, պայծառափալ զեներալն, հայր, տաճիկի և բուրդը և ամէն բազմութիւնք շատ, մինչ ետև սուրբ կայսրն զնոր տեսարանն, ուրախ եղն և ի ծոցոյ իմէշ հանեալ զիօշորացոյցն ետու ձեռամբ իմով նորին կայսերական մեծութեան, առեալ ի ձեռանէ միմէշ և նայեցաւ նովալ զմանրահատ ծուսն զրմզոյ և ետ ինձ զիօշորացոյցն ասելով զիօրօշօչն շանգամ և հրամայեաց իւրոյ ատութանդին տանիլ ընդ իւր, միկնոյն որ յառաջազոյն նուիրեալ եմ նորին պայծառափալութեանն և նա մատուցալ է Պասկալիին և յետ նորա պարօն Բօղէնին, որ նա ի 1830 նուիրեալ է նորին կայսերական մեծութեանն, որ անունն իմ յայնմ ժամանակին կազեթի գրատարակեալ են, որպէս յայտնի է տեսողացն և լուղացն. մինն կորուայ և զտասն ի միասին զտիասի մեռվ:

Նորին կայսերական բարձրութիւնն մինչ ել եկեղեցւոյն զնաց.... անդէն ուսումնարանն շրջելով առաջի սենեկաց միարանից, և կանգնեալ կայի ի մէշ պարտիզին իմոյ, եկեալ կամէր գնալ ներսն Վեհափառն, անդ ևս ունէի մարդ մի ապակեայ յօրինեալ և ի մէշն լի նոյն կենարանի որդ. եղոյց սուրբ տեառն մեր նորին կայսերական բարձրութեանն, ետես զայն և ապա տարեալ բօթնոցովն կանցելարի<sup>56</sup> առաջին ետես որպէս պատմացր:

Թէպէտ գրէ իմաստունն թէ՝ համբաւ բարի պարարէ զոսկերս, սակայն երկնլիմ ես յայնմանէ, որ ասէ՝ վա՞յ մարդուն այնմիկ, որոյ անունն մեծ է քան զգրածքն. միայն ձեր բարի աղօթքն ապակինելով, յուսամ թէ բա-

ոի լինի մեզ, ու անձիս այլ հոգույս ողբերմեցի  
Աստուած ձեր բարի մաղթանքն:

20p

|| Յամի Տեառն 1836 ի քանիսն ապրիլի, միշտ մտա-  
խոհ լինի, վասն կոտորակի թղթոցն, մանաւանդ որք ի  
բերանուու մամլոյ կազմարարին թափէին, իրոն անպի-  
տան, և առ ոսս կոխոտեալ անցանէին և ոչինչ համա-  
րէին, հողմատար լինի, առաջի տպարանին որ ներսն  
էր գեղսն տպարանն այն ժամանակին, մինչ կամեցայ  
բերել զնմանէ լսեցի թէ՝ համամլին ժողովի է զբազ-  
յակոտորակ թուղթսն առ ի այրել բաղնիքան որ  
նովակ շերմասցի ջուրն. գնացի բաղնիքանին մուննաթ  
արարի. և առ ասաց՝ կէսն այրեցի, օգուտ շեղս, կէսն  
է տարի տուն բարձի մէջ զնելու, այն միջոցի որ  
թափէին, չէր զարթեալ միտք իմ, երբ պակասնցաւ  
սկսայ մտախոն լինի վասն թղթահանութեան թէ՝ յո՞ր  
հղանակաւ կարեմ կազմեն, որ պիտանի բան լինի, առի  
և բերի սակա ինչ զնմանէ:

Յատուր միում աշակերտութեանս ժամանակին պատ-  
մեալ էր լուսահողի տեառն Յօհան վարդապետս, որ  
ինքն 12-ամեայ հասակի իրում յատուրս բազմաշահ և  
նորահրաշ Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսին  
յերկանցույ, որոյ յատուրսն ծաղկեցաւ Սուրբ Աթոռ մայրս  
մեր Սուրբ էջմիածին, վասն թղթահանութեան և տպա-  
ռանին, որ իրը զճարդ լոյս տայ յաշխատանս նորա  
նեալ ի վերայ աշտանակի, որոյ հոգին Տէրն լուսաւո-  
րեսցէ յարբայութեան իրում, դասելով ընդ երանելի  
հայրապետան:

Ասացի թէ լուսահողի տեառն Յօհան վարդապետսն էր  
պատմեալ ինձ մասնաւոր կերպի և ի մտախոն լինիս,  
յուսացեալ բազմաշնորհ պարզեան Հոգուոյն Սրբոյն, եղի  
մտացս արարողութին թէ՝ յո՞ր կերպ առնեմ, մինչ զի ի  
նշջես խնդրեցի ի Տեառնէ և տուու ինձ զհայցուածո  
թու.... Զնի այսո, ի լուսանալ առաւոտուն, զկոտո-  
րակս թղթոց եղի ի մէջ ջրոյ թրջոց և հանեալ եղի ի  
մէջ հաւասկի և սանտի տօսամբ՛ այնքան ծեծեցի, որ  
եղկ իրոն զմածուցիկ իմն և հանեալ եղի մաքուր աման  
և լցի նորա վերայ ջուր, խառնեալ՝ եղկ կանանման.  
ուշիկ ուշիկ հանեալ եղի ի վերայ կոտոր մի մահուցի,  
ի վերայ ատախտակի եղեալ տարածեցի ձեռովս, դար-  
ձեալ մահուու և հարթ հաւասար տախտակ և քար ժանր  
եղի ի վերայ նորա մինչեւ բամեցաւ լաւագէս ջուրն և  
հանեալ շրացուցի, կոկցի, գրեցի և տեսի, որ ըն-  
դունեաց զգին և ոչ ծրեաց. ուրախացայ. դարձեալ  
ուրախացայ. և արարի 4 հատ մենճ կէս թապաղայի  
շափ, մինչ աւարտեցի, խնդրի արարի տպարանի վերա-  
տեսուց բարձր ..... խալապասկ նիսիսայ անուանեալ  
Յովզաննէս վարդապետին՝ առ ի տպել զպատկերն  
Սուրբ էջմիածին, որ եղ առա ի գործարանն և տպեց  
3 հատ պատկեր Սուրբ էջմիածնի ըստ փափաքնացաւ,  
Եւ ուրախացեալ փառս նոու Աստուծոյն մերու, որ  
առաւապէս տայցէ հոգին Սուրբ Աստուած որ գիտօն  
է ամենայն գաղտնեաց և տայ պարզես առաւորէն  
խնդրողին:

Ասացի թէ՝ ի կոտորակէ թղթոցն, որը ելանէին ի  
բերանու մամլոցն կազմարարի յօրինեցի, տպեցի և մի  
վասն այսօր և վասն զանազան գործոց ի վերայ սոյն

թղթոյ գրեցի առ նորին Սրբազան Օծութեան յաղադ  
ձանօթութին տալու:

1835 Հոկտեմբերի 26, Սրբազան Տեառն մեր Ցով-  
հանէսն կաթողիկոսն գնաց ի Թիֆլիս առ կուսական  
վասն զանազան խնդրեաց. ալերդ միջոցի որ պարապ  
էի մանցեալ վասն ծաղկելոյ զթուղթսն Սրբազան Վե-  
հապետին, սկսայ այսպէս բանիցն հնտէիլ յօդուտ  
Սորոյն Աթոռոյն և սորին աստուածընտիր գանձակալացն,  
որոց եղբիւրն բարձր է և բարձր նդիցի Աստուածով ի մով  
յափտեան ժամանակաց:

|| Հետեւումն իմ այսպիսի բանից, օգուտն շատ է և  
շահարեր և պտուղ աշխատանցս օգուտ ընթայեն, որ-  
պէս յաւուրս հանդուցեալ կաթողիկոսին, այս թուոց  
գեկտեմբերի 22-ին, ի վերայ իմս յօրինեալ թղթոյ  
մատուցի խոնարհարար խնդրի նորին Վեհափառ Սուրբ  
Օծութեանն ի ներկայութեան գերապատեալ բարձր  
սրբազան հասպետափառ Բարսեղ արքեպիսկոպոս աւադ  
լուսարարին և նոյն պատուլ Յովսէի արքեպիսկոպոսին  
և լուսահողի հիւրենկալին և իւրոյ հարազատ պաշտօ-  
նէիցն, զօրինեալաւն իմ զկոտորակէ թղթոցն յարմարեալ  
թուղթն, պատկերսն, զպատաշն, որ կալաբրի աղն է,  
զսուինձն նորաձն յաղագս կոնդակաց կցանքին, զկա-  
նաշ ժանկան:

Այսու օրինակաւ ընթայեցի և ետ մեզ պարզէ Ա  
պաճամի ոսկի միայն, շէն կենայ իւր հօր օճազն, որ  
այսբան աշխատանցս, ալիքան վարձ ետ:

Նորին Վեհափառ Սուրբ Օծութիւն սրբազանակատար  
կաթողիկոսի ամենայն հայոց Տեառն Յովէաննու և կայ-  
սերապասկեալ ասպետի.

Ի նուաստ ծաղկազարդ Խաչակ կափսկոպոսի մահ-  
տեսի Տէր-Գրիգորիան երեանցույ ամենախոնարհ ըն-  
ծայարերութիւն:

Ի վագ ժամանակաց հնտէ տեսեալ եմ զրազմաթիւ  
կոտորակս թղթոց որբ ելանէին ի մամլոյ կազմարա-  
րացն, վասնեալս յումպէտս իրը անպիտան ինչ ար-  
տարս ընկեցեամս և ոչնչացեալս, ցանկայի և խորհէի  
դունանէ հնար իմն վերստին թղթացոցանելոյ զայնս,  
առ ի լինիլ պիտանի յօդուտ Սորոյն Աթոռոյն, վերջա-  
պէս փորձ փորձեալ զտի զհանարն որով ի բազմագեալ  
յիշեալ կոտորակաց արտադրեցի ըստ կարի զկրին  
տեսակս թղթոյ:

Եւ քանի օրէնք են յամէն լուսաւորեալ պկինս և ի  
տէրութիւնն զայսպիսի նորանար գիւտս՝ որք ըստ տեղ-  
ւոյն պիտանի և օգուտէտ համարեալ ունիցին յայտնեալ  
կամ առաջի առնել նախապետարար վեհագունիցն, մինչ  
իրի և ոչ նուազ օգուտակար Սորոյ Աթոռոյն համարելով  
զայս զիմ գիւտ, արժան զատեցայ առաջի առնել ամե-  
նախոնարհարար ըստ այս Զերումդ. Վեհափառ Սուրբ  
Օծութեանն ի տեսութիւնն:

Եւ յաւելում խոստանալ եթէ զոյն նորագլւտ արտա-  
դրութիւնն իմ Վեհափառ Օծութեան Զեր ևս համարելով  
օգուտակար հրամայեսցէ պատրաստել զպործիս ինչ  
կարենոր առ. ի. նոյն, կարօն եմ շնորհիւ. Զեր զլաւագոյնն  
կամ ըզնրագոյնն ևս արտադրելու:

Բայց յայսանէ իմովս սեպէական աշխատութեամբ  
հնարեալ ունիմ նաև զպատաշն ասացեալ սպիտակ աղն

յաղագս լուսնալոց զգիրս տպարանի, զիշշտայ<sup>58</sup> վասն և զսոսինձ նորատեսակ ի պէտո կցանի կոնդակաց, և այլոց այսպիսեաց, զայսոսիկ ևս սակաւ օգուս համարելով Մրբոյն Աթոռոյու Ընծայաբերելով, հոգմոր Տէր, զայսպիսի գիւտ իմ Զերումդ Վեհափառ Օծութեան որպէս պատու ինչ՝ ճշմարիս ջերմեսանգութեան իմոյ և հաւատարմութեան առ Սուրբ Աթոռ մայրու մեր և առ Զիզ, մնամ խորին հպատակութեամբ իմով և նոյնպիսի շերմեսանգութեամբ Վեհափառ Օծութեան Զերում ամենախոնարհ ծառայ:

Սաղկազարդ Խամբակ՝ Նպիսկոպոս

Համար 106, 1836, 22, 12:

Ի Սուրբ Էջմիածին:

|| 1837

Ճինի այսր պատմութեանս, ի 1837 ամի Տեառն յունուարի, ստու ըերել առ իս Աֆանոսվ օրհնեալ Կարապետն, որ զիտէ օրինաւոր հիւսնութեան արհնստու, ետու շինել զինկ մի 12 շաբաթախով<sup>59</sup>, վասն թուղթ շինելոյ օրինակի, լսու ծագման մտացս Հոգուն Սրբով, որ ազգեաց ի հնարս գտանելոյ զնեն և նղանակն, որոյ ձեն ըստ օրինի նկարեալ էի իրբն պլան. շինեաց ըստ ախորժանացս լաւապէս, և շաբաթախն յաց, Են աշնակի պտոյտ տալն զարկէր կայտալով շամաթայ առնելով:

Որոյ խարճն ևս արարի և ի ծայր զիկին ետու շինել շրազաց մի ըստ օրինի ցիցն, տապարակն, էր երկարիայ ընդ պտոյտ տուող կէս երկաթն, որ փոխանակ շրոյ պտոյտ տար ոմն ոք, որ եղեալ ունէի մտացս ըստ պատմութեան լուսանողի դաւիթ խանին Մատուրեան և ընդ պատմութեան մանաւանգ, որ զիրք մի ևս կցոյց մեղ լուսանողի ազայ Յակոբ Շահն Ֆրակտեանի, մինչ էի ի թիֆլով ընդ հոգմոր ծնողին իմոյ Տեառն Ել կը լուսայ սրբազն կաթողիկոսին և ի տեսանելն իմ զգիրը նորին, որ լի էր զանազան պատկերօք, և ամէն մին պատկեր զանազան զործառութիւնն աշխարհի ցուցանէր և ասէր՝ այս զործաւորքն են Փարեժ քաղաքի կոյրքն և զանազան ցաւագնեալքն, որ նորին կայսեր հրամանաւն ժողովնեալ են ամէն կոյրք և կազզ և այլըն ամէն և կարգեալ են ի վերայ նոցա զործավար ուսուցիչը, որոց տան ուսումն առնուլ և զործ զործել, որպէս տեսի ևս այնմ զրբոչն և նկարեցի ի նոյնանէ զբանի մին պատկերսն, ոյք էին տապարանի զործաւորքն, մրազարկն, շարին պտոյտ տուողն, զրաշարն, մամլոյ քարշօղն, զիրք կազմօղն, ուսուցանողն կանդնեալ առողջ մարդ և ուսանողն կոյր ոք նստեալ աթոռով ուսանէր ի վարպետն, որ մատամըն ցուցանէր զգրաշարութիւնն, նոպան զործող, խոնճան<sup>60</sup> գործող կին ոմն կոյր և այլք ևս զանազան բանից և զործոց պատկերը, մինչ տեսի զնսսա, նկարեցի ի նոցանէ զբանի մի պատկերսն որ գրեցի զործոց անուանքն, և այսու ձեռլ կամէի և ևս առնել, ի ձեռն կոյր՝ Քեալաշ Յակոբին, որ այն ձեռն ետու շինել զշարիսն, որ մարզի պտոյտ մինչեւ շրով պտուիլու շարին շինելն ընդ ժամանակին:

Եւ այս շարիսին խարճն զուր և ընդ վայր զնաց. ևս կամեցայ ընդ նոսին որպէս Փարեժ քաղաքի եղելոցն

<sup>58</sup> Յորենից պատրաստած օսլա: — <sup>59</sup> Թիարերան: — <sup>60</sup> Վարտիքի, մեջքի կապ:

նմանեցնեմ, բայց, բայց, բայց և և և ա զին [ասեն] [վայ] զ[այ] բ[արակ] մ[անողին]:

սրց շանի կէս, տապարակն ևս՝ շանի կէս, օրն և և նրա զութոյ խարճն, հացն, զինի, պարզեն և միշի միլն կեռ ու մեռ ափ վախ անելով գնացին և զու ևս գնան ընդ երկայն ճանապարհ:

Ավ որ ընդունի բանս այս ընդ գիտաւորութեան և երկայնամտութեան իմոյ օրհնեալ է, և օրհնեալ եղիցի յԱստութոյ, և որ որ բարձրաէ զիս և զարարողաթիւն իմ կարամատութիւն համարէ, կարճակնաց լինի նա, որ արհամարհեաց ասացի յառաջազոյն թէ՝ եթէ մին ու կորուսնեմբ վասն տասին, ասա ինձ, ո'վ հայր և եղրայր մեր, տասն միասին սաստի՝ գտանեմբ, զիք մարզարէն բացարձակ համարձակ թէ՝ երթալով երթալին և լային, ոյք բարձեալ տանէին զսերմանիս իւրինաց. զալոյ եկեսցին և ցնծացին, որոց առեալ բերցին... ի սերմանելու լաց, և ի հնձելու զմիքրաց ծիծաղնա և օրհնեա զնա՝ որ նստի ի բարձունս Սաղմոս և օրհնութիւն:

|| 1839

Ի 1839 ամի Տեառն յունիսի 12 օրն, նորին Վեհափառ Սուրբ Օծութիւնն յղեալ էր մեղ մօտ շաթիր Մատիկոն թէ՝ զնա, Մաղկազարդին աւետիթ տուր և ասա նմա՝ նորին կայսերական բարձրութիւնն հրամայեալ է ամ ըստ ամէ որբան կենդանի ևս, ստանաս տարին 200 մանէ արծարայի, ի մերմէ զանձարանէն, վասն որոյ շաթիրբաշի Մատիկոսին ետու պարզէ և մանէթ և թովայաց ծովաչփի ազայ պրօկուրօրն ևս էր գրեալ մեղ. անեմաց գիր բիրող խասաւուզ Զէորգին ևս ետու և ու.

Մաներութ և տեսէր, հա՛րք իմ և նղա՛րքի Սոյն թիւ որ ի վերն է, մարտի 14-ին թագաւոր կայսրն բարեհանեալ քրիալ վասն մեր ընդ խնդրոյ նորին Վեհափառ Սուրբ Օծութիւնն, նոյն ճրաման կայսերն ընկալիալ է նոյն ինքն Սուրբ Օծութիւնն և յունիսի 12 օրն աւետառուն է յղեալ մեղ, որով ուրախ եղէ և գոհութեամբ փառա մատուցի բարձրելոյն Աստութոյ, օրհնելով կիան խաղաղաղական խնդրեցի յԱստութոյ վասն նորին կայսերական մեծութեան և նորին Վեհափառ Սուրբ Օծութիւնն և սրբազն սինօթին, և այլն:

Հրամանս այս մնաց մինչեւ զդեկտեմբերի 8, որ հրաման առի նորին Սրբազնէն և զնացի երկան և առի ի մարտի 14-էն ըստ նշանակութեան բարձր հրամանի նորին կայսերական մեծութեան 142 մանէթ և 27 արծաթ կոպէկ:

Գարձեալ ասեմ, ի սոյն թիւ յունիսի 12 օրն, որ մեղ յայտնեցա ճրամանն նորին կայսերական բարձրութեան, նորին Վեհափառ Սուրբ Օծութիւնն հրամայեաց զանձարանէն, որ Մատիկոս նշիսկոպոսն էր այն ժամանակի զանձարանէն, որ Սուրբ Աթոռոյ գանձարանէն, ամ ըստ ամէ տալիս էին մեղ, 1830 ամէ սկսեալ մինչեւ 1839 տարին, 30 թուման երկանու գեշար զրամ, որ 1828 ամին, զինի վերալառնալոյ Տեառն եղելմայ սուրբ կաթողիկոսին ի Տիֆիխ քաղաքէն, ի բանիսն օգսուոսի նոյն թիւ, հրամանաւ սրբազն սինօթին կարգեալ էին մեղ տարին 28 թուման:

Եւ ի ընտրողութեան ժամանակին վասն նոր օժելոյն 8-րդ Կարբեցոյ խնդրեցի ի նորին բարձր Սրբազնէն որ գեռ չէր օժեալ, հրամայեացէ տալ մեղ տարին 30

թուման, որ ամէն տրէիթաՅ<sup>61</sup> լինի 10, վասն լաւապէս գիտելոյ գհաշին, խոստացած տալ և ի ձեռն թարսեղ եպիսկոպոսին լուց մեզ 2 թուման. Հրամալիքաց գանձապահին տալ մեզ տարին 30 թուման... յօրէ յայնմանէ տարին ստանալի 30 թուման և հանդերձ իմ ընդ հասարակ միաբանից տվլիս էին և գեռն են տալիս ամ ըստ ամէ հասարակ շոր:

1839 ամին յունիսի 12 հրաման արար սրբազն կաթողիկոս գանձապահին, որ այլև շտան Աթոռոյ գանձարանէն մեզ, որ ինքնանք էին արարեալ և կարգեալ թարգ գիտութեան իմոյ և ինքն էր կարգեալ 1828 և 1830 գարձեալ ինքն հրամայեաց շտալ... 1839 ի յունիսի 12:

1839: Այստ ամէ շատ նեղութիւն կրեցի պարտ վեր առնելով, մինչև ցղնկամբերից 8, և զին և որքան ստացայ, հազի կարացի տալ պարտն իմ և ձմռան փայտ և մոմն միալ առի և սպասեցի 1840 ամին տրէին ստանալու:

Իսկ ի 1840 ամին Տեառն ի փետրուարի 2, վասն ծովացեալ մեղաց իմոյ, շատ սաստիկ սանջու<sup>62</sup> պատահեցաւ մեզ և մինչև ցՍուրբ Զատիկին տնեաց (աշխարհի վերայ այսր ամին վիճ մեծ է, որ ամէ Սուրբ Աւետարանն). և 2 ոտքս քամիք անձին իմոյ փակեցին սաստիկութեամբ, ուռան, նստան, զարձեալ ուռան, տղուկով, համամաթոլ<sup>63</sup>, զանազան սպեզանիս առնելով թէպէտ ուռոյցն զարդեցաւ Աստուծով իմով, սակայն 2 ոտքս թուլացան ծնկներէս սկսեալ, որ առանց օգնականի ոչ կարէի ելանել, դուրս գնալ և գալ, մինչև 2 ցուալ կոնատակի || զնիւլ ետու շնել, որ հազի կարէի ել ու մուտ առնել և այնպէս երբեմն զնայի յեկեղեցին ազօթելուս այնմ որք ասեն թէ՝ անդազայ զօնազ ուզ գին օթրաղ. յերբեմն մեր ներքին այդիներն էի գնում, վայ էն զնալուն որ գնում էի, նոր ուսն եկեալ երեխայի նման, տօտա տօտա էի անում և ի վերադառնալս իշով էի գնում տում:

Մինչ Հազրաս էաք ի 1822, 1823, 1824, 1825, 1826, 1827, ի սոյն թիւ Վարդավառ օրն զնացինք ի Տիխիս ընդ Տեառն Եփրեմյ սրբազն կաթողիկոսի հոգնոր ծնողաց իմոյ, վասն մեծ պատերազմին պարսից ընդ ուտաց և նորին նոր կայսեր Նիկոնյաց պայտառափայլութեանն առաջնոյ, ասացի թէ՝ մինչև Հազրաս էաք, էր անդ միաբան ջին ծերումի, միամիտ աղանձն Ստիփան վարդապետ ոմն շինողնեցի, երբեմն ամէր ի խօսկութեան ժամանակին սորա նորա այր բանն թէ՝ իշին հստես, Աստուծած ողործի նորա միամիտ հոգոյն. նա թէպէտ շախայով ասէր, ոչ բռքըր և ոչ անէծք չէր ի թերան նորա, այս միայն թէ՝ բարկութեան ժամանակին, թէ՝ սիրոյ առարկայ եղեալ ժամանակին, իշին նստես ասէր, վասն որոյ ի վերայ իմ կատարեցաւ բանս այս, որ իշով զնացի մերս փեսայ ծովակիմի այլին որ ի Քանաքեռ է, ընդ Ապուճայաթ զրին մերոյ և վերագրած իշով մեր տունն և ի ելն օգոստոս ամսոյն, դիմեալ ի Սուրբ Աթոռն, եկի նոյն զրութեամբն կալասկայով<sup>64</sup>,

61 Երրորդ մասը— 62 Փորացավ, խիթի— 63 Ապակյա շիշ, որի մեջ վառված բամբակ կամ թուղթ են պատեցնում և փակցնում մարմնի ցաված մասի վրա— 64 Սայլակի

որ այն էր խախուտ. Փարաքարու Վանանց այգուոյ յետկոյոն, շարէքն զատար հեռի, թիկաւ կալասկային, որ մերս հաւատարիմ Աղազատով Գէրզին սաստեաց սպասաւրացն այնր կալասկայի, որք էին սաճիկը, զիացեալ երկանու նորն թրին, նստար մեզ և ի մէջ զիշերի եկեալ ժամանեցաք ի Սուրբ Աթոռն 2 փայտի ցպոյ, որ այժմ, ողորմութեամբն Աստուծոյ, միով փայտի շրջեմ և այն:

Ի 1840 ամին, այսմ տկարութեան մէջն, շունէի դրամ մի թէ շատ և թէ թիւ, վասն որոյ ողորմութեամբ խնդրեցի ի նորին Վեհափառ Սուրբ Օծութենէն, հրամայեաց զանազապահին, որ էր Սատարէն եպիսկոպոսն, թէ զին և ուզէ տուր և զաւըն առ, որ հատուցանէ քեզ զպարտն իւր. ես ողորմութիւն խնդրեցի, նոքա պարտք ետուն և առին. գրէ մարգարէն ի բերանոյ 7-ն կանաց, որ ասէ. 7 կին ըմբռոնէին զայր մի և ասէին, զնացս մեր կերիցուք և զանգերձս մեր զգեցցուք, բայց միայն անուն քո կոչեսցի ի վերայ մեր:

Տես դու, ո՞վ հայր և եղբայր իմ ցաւակից. առաջինն, որ մեր թողար զամէն և եկաք զկնի թո, արդ զի՞ն լինիցի մեզ. ասացին առաքեալին Թրիստոսի, և նա իւր աստուածային սուրբ բերանովն և անսուտ բանին խոսացաւ. նոցա, նստուցանել յարբառութեան իւրում զերկուտասան աթոռ, զատել զերկուտասան ազգն Խորայնլի. հարէ էր նորին Վեհափառ Սրբազն Օծութեանն նմանիլ Թրիստոսի, որ փոխանորդ էր, ողորմութիւն համարէր տալ և ոչ պարտ... Զարմանք են և զարմանալի որ համ միաբան եմ Սրբազն Աթոռոյս ի մանկութենէ իմմէ, համ 50 թուին Հայոց ՈՒՄ աշակերտութենէս սկսեալ մինչև ցայսօր կամ ի ծաղկարարութենէ, որում ժամանակին աւելացուցի զծառալութիւնքն իմ հաւատարմապէս և ոչ նուազեցայ որպէս ի վեր անդր ծանեալը զպատճութիւն իմ ախորժալի, ասա, ո՞վ երանեալ Տէր, զի՞ արարիր, միթէ պակաս ժառայեցի Զեղ քան զնիրեմ և զԴանիէլ զերերշանիկ սրբազն կաթողիկոսացն. ոչ բնաւ. հապա վասն է՛ր հրամայեցիր, թէ հատո սպարտսդ զանազապահին, միթէ կորած տեղ էր որ ետուր, միթէ զկնի այնր շծառայեցի, որ զեռն կամ ի նոյն պաշտոնի ժառայութեամբ իմով այսմ ցաւակաբեալ տեղովս. ո՞չ ապաքէն և ես մի էի ի նոցանէ, որ տիւ և գիշեր ժառայէին ձեղ. նոցա հարիւրաւորն և հազարաւորն շրաւականացաւ, մեզ զի՞ն եղեւ առաջի ձեր. միթէ օտար ոք էի, և թէ՝ ոչ փառենայի բնաւ. ժառայութեանն ձեւ. գոնէ հարկաւոր էր վասն աղքատ միաբանութեանս շահեալ լինէիր և այս Թուղթը շուռ տուր, արասին կուլ տուր, նահատակ կենդանի:

|| 1840 ամին Տեառն ի մէկն յունուարի, մինչև ցվեր ղեկաներից, հազի թէ կարացի ընկալնու զկայակերականն ողորմութիւնն. պատճան էր այն, որ Թիֆլիզու գանձապահէն չէր եկեալ հրաման Ցիրանայ կազմեցային<sup>65</sup>, որ ի 27 հազի ստացայ 200 արծաթ մանէթն և Սրբոյ Աթոռոյն ըստ հրամանի նորին Վեհափառ Սուրբ Օծութեանն տալու էի 25 թուման, որ և ետու ի ներկայութեան աստուածափառ Ցիրանայի արքակիսկուպոսին 81 մանէթ և Ա սաղ արասին Սատարէն եպիսկոպոս զանազապահին և առ զավերս ես ոչ քաղցեալ այս պարտս

65 Թառորդ ժամի— 66 Գանձապահն

զմարելով, բայց գեռնս նորա քաղցեալք են Աստուծով իմով:

1840: Այսմ թուոչ, մինչ կայի մէջ նեղութեան իբրև անդամալոյժ ի տան հօր իմոյ անայցելու, թէկ եղրարք և ամէն ազգականք իմ ցաւէին, զի՞նչ օգուտ ի նոցանէ, եթէ ոչ էր օգնեալ ինձ փոքր մի ևս, բնակեալ եր անձն իմ ի գոյսս ընդ մարդարէին: Արդարն օգնեաց ինձ Տէր ի սէր սուրբ յարութեան, որ ի մէջ մահճի կայի Սուրբ Զատկի ճրագալոյց երեկոյին, որ ցուցակ մատիս ծայրին թաթախեալ զգեղնուց ծուոյ և ոչ թացեալ եղի մատս ի վերայ լեզուի իմում, որպէս թէ թաթախեցայ ըստ կանոնի հարցն սրբոց նաւակատիս առնելով. և ի գիշերի Սուրբ Յարութեան Տեառն, մատաղի շուրն ըերի ետու, ըմպեցի և զտի բժշկութիւն Աստուծով իմով....

... || Այսմ ամի, 1843, ողորմութեամբն Աստուծոյ, այգեց ողկոյզն այնքան առատ գոլով, ոչ բաւականանալոր կարասին Սրբոյ Աթոռոյս....

... Երկնչիմ արդարք երկնչիմ ես այսմ և ոչ երիցս. նա որ երեք անուամբ մի է և մի տէրութիւն և

մի աստուծութիւն, Հայր անպատճառ, Որդին անճառ և Սուրբ Հոգին գերափառ. նա քաւեսցէ զյանցանս իմ և ձեր, թողով զյանցանս մեր որ սխալեցաք, և ագահութեամբ իմով բարկացոցի զՏէր Աստուծ հարցն մերոց, թո՞ղ Տէր, թո՞ղ զյանցանս իմ, աղաշեմ զքեզ, միշնորդութեամբ անարատ ծնողի քոյ Սուրբ Աստուծածնիդ և աստուծածընկալ սուրբ խաչիդ, որոց երկպագեմ, ի փառ սուրբ աստուծութեանն քոյ, ընդ համօրէն գունդս սրբոց բոց երկնաւորաց և երկրաւորաց. ընդ որս աղաշեմ զքեզ, Տէր, հայեաց յիս և մի՞ տար զիս հզօրիս այս և փըրկեա' զիս յաններելի տանշանաց. վասն իմ ասէ ով՝ եթէ արժանի լինէիր փայ և բաժնի, քեզ ևս տային փայ և բաժին. ուրեմն լուռ լեր և որ իմաստունն է. ի ժամանակին այսմիկ, լուսցին, զի ժամանակն շար է, ասէ իմաստուն՝ զու խնդրեա ի Տեառն աղօթիք նախ զարքայութիւն և ապա զայդ ամէն յանեցի ձեզ. ասէ Աստուծ՝ խնդրեցի և լուաւ ինձ, ետու փառք յամենայն րոպէի, նմա եղիցի որ... յաւիտեանս, ամէն, ալէլուիա:

